<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
երկուշաբթի, 24 հուլիսի 2023թ., 14:10

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
11 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Վարդան Աթայան
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Գոհար Գրիգորյան
Օվսաննա Առաքելյան
Գուրգեն Ղուկասյան
Վաղինակ Ստեթանյան
Դավիթ Պետրոսյան
Արթուր Ապերյան

Հրավիրվածներ
ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ Մարիամ Ժամկոչյան և Տաթևիկ Սվազյան
Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասով
Համապատասխանության գծով տնօրեն Լևոն Գրիգորյան

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 24.07.2023թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 06.07.2023թ. դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով 07.07.2023թ-ին:

Ժողովի օրակարգի հարցի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 24.07.2023թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 24.07.2023թ-ին:

Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը բացեց նիստը և ողջունեց բոլոր մասնակիցներին: Ներկայացրեց, որ օրակարգում է Բանկի կանոնադրությունում փոփոխությունները հաստատելու հարցը: Նշեց, որ Յունիբանկն իրականացրել էր թվով 15.000.000 հատ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում: Հրապարակային առաջարկը սկսվել էր 08.05.2023թ-ին և ավարտվել էր 30.06.2023թ-ին: Բաժնետոմսերի գնման նվազագույն ծավալը սահմանվել էր 1.000.200 ՀՀ դրամ:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ տեղաբաշխման արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կավելանա և կկազմի 22.425.447.230 ՀՀ դրամ, տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի քանակը կավելանա և կկազմի 181.254.472 հատ: Կանոնադրական կապիտալի համալրման հետ կապված Բանկի կանոնադրության 4-րդ գլխի 4.1 կետի առաջին և երկրորդ մասերը վերաշարադրվելու են:

Մեսրոպ Հակոբյանը խոսքը փոխանցեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանին՝ ներկայացնելու քվեարկության արդյունքները:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172.886.525 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 169.407.888 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 97.99%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր ճանաչված առկա չեն: Քվորումն ապահովված է:

Օրակարգի հարցը՝ <Յունիբանկ> ԲԲԸ Կանոնադրությունում փոփոխությունների հաստատում:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 169.407.888 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով Ժողովը <u>որոշում ընդունեց</u> հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ Կանոնադրությունում փոփոխությունները և ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման:

Աննա Բադոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի հարցը քննարկված է, որոշումը ընդունված է, դիմեց ներկաներին հարցեր տալու առաջարկով: Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:
Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և ավարտեց Բաժնետերերի ժողովը ժամը 14:15-ին:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 24 հուլիսի 2023թ.